




ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ՍԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Ի Պուլկարիա Տարեկ. 10, Վեցամս. 5 ֆր: ԿԱՆՆԻՒԼԻ: Երաստահման Տարեկ. 12, Վեցամս. 6 ֆր:
Գրութիւնք եւ չեն տրուիր: Հասցէ DIRAN PAPAŽIAN YELDEZ TABIA, VARNA BULGARIE

ԱԶԳԱՅԻՆ

(Այսօրուսն Թղթաբեր)

Վեհ Հայրապետը այս անգամ ալ 120 օսկիի գումար մը պրկած է Պատրիարքարան, Նպատակը Յանձնաժողովին տրամադրութեան տակ գրուելու համար:

— Պատրիարքարանը չըջաբերակա՜նով մը կոչում կընէ Թագ. խորհուրդներուն, որ Զատիկի տօներուն առթիւ, Ծաղկաղարդի կերակրէն սխտալ մինչև Նոր Կիրակի յատուկ ծանուցումներով եկեղեցիներ, ու մէջ պնակ չըջաբերուի հայ բանտարկեալներուն ի նպատակ արդիւնքը զրկուի Պատրիարքարան:

— Անցեալ փետր. 20ին Թիֆլիսի մէջ փախճաններ է Պ. Յովսէփ Ամիրեանց, որ իր հարստութեան կարեւոր մէկ մասը կտակեր է բարեգործական նպատակներու: 20,000 ռուբլի յատկացուցած է իր անուամբ երկու օրդեգիր պահելու համար ռուսական համալսարաններու մէջ: Իսկ մնացած հարստութեան տոկոսը պիտի բաժնուի այլ և այլ բարենպաստակ հաստատութեանց:

— Բարիդի հոգևոր հովիւ Տ. Վոյամ շապուհ քահանայ անցեալ շաբթու Պէլճիգայի Անվէրս քաղաքը գացեր է տեղւոյն 20 հայ ընտանիքները խոտտովանցնելով հաղորդելու համար:

— Ուսու կառավարութիւնը՝ Նոր Բաշապիտ պատուի քառն գիւղերուն որոշելու է քանքարու հաղար ռուբլի փոխատուութիւն մը ընել կերակուրի և սերմնացուի համար: Այդ գիւղերուն մեծամասնութիւնը հայ է, անանկ ոչ 6000 աղգայիններ՝ որոնք անցեալ տարուան երաշտէն մեծապէս վնասուած էին, պիտի օգտուին այդ փոխատուութենէն:

— Խարբերդէն կը գրեն թէ վերջէն Նորէն Ամերիկա երթալու և հոն գործաւորի կեանքով ապրելու միտում մը ցոյց կը տրուի տեղւոյն աղգայնոց կողմէ: Որոնցմէ արդէն 50 տնտուր հարկ եղած դիմումները բերել են ճամբայ ելլելու արտօնութիւն ստանալու համար:

— Երուսաղէմէն կը գրեն թէ մինչև անցեալ շաբթու 650 ուխտաւոր աղգայիններ հոն հասած են զանազան վայրերէ, և կը յուսացուի որ մինչև աւագ շաբթու հաղարի հասնի:

— «Բանասէր» խմբագիր Տիար Կ. Բաաֆլեան ալ հրաիրուած է Յուդա-

հանդէսի միջոցին Գոյեթ *sp. Erwin* անուն բարձրագոյն վարժարանի շէնքին մէջ գումարելի «Համեմատական պատմութեան միջազգային համաժողովոյին» մասնակցելու:

— Նպաստից Յանձնաժողովը որոշեց Վեհ. Հայրապետին կողմէ ղրկուած 120 ոսկիին կէսը յատկացնել Մշտ. գաւառին և կէսն ալ Վանայ կարօտեալներուն:

— Ս. Յակոբայ որբանոցին կօշկակարութեան արհեստին հետեւող որբերը 18 զոյգ կօշիկ շինելով, առաջիկայ Զատիկան տօնելուն առթիւ նուիրելու են Արմաշու Գպրիւ վանքի որբերուն:

— Առաջիկայ շաբաթ օր մացուելիք Բարիզի Արուեստահանդէսին մէջ շատ մը հայեր իրենց աշխատութեանց արգիւնքը ցուցադրած են: Անոնց մէջ կը յիշատակուի ճարտարագետ Պօղոս բաշա Նուպարի յօրինած երկատրական արօրը, որ շատ գեղեցիկ գիւտ մըն է եղեր:

— Զարտարապետական բնութիւն մը հաստատած է որ Սամաթիոյ Ս Գէորգ եկեղեցին փլշելու վտանգ կը սպառնայ: Տեղւոյն Թաղ. Խորհուրդը Պատրիարքարան տեղեկագրած է այս բանը և 200 ոսկիի ծախքով նորոգութիւն կը խնդրէ:

Հ Ր Ա Ի Ի Ր

Քաղաքիս մէջ բնակող 80ի չափ երկսեռ ազգայնոց հաւանութեամբը պիտի կազմուի Որբախնամ ընկերութիւն մը, որուն նպատակը պիտի ըլլայ Վարդապանքի որբանոցին մէջ կարելի եղած թուով որբեր պահել:

Ընկերութեան ընդհ. ժողովը տեղի պիտի ունենայ վաղը, ապրիլ 2 կէսօրէն վերջը ժամը 2ին ազգ. վարժարանին մէջ, և պիտի զբաղի կանոնադրի վավերացման ու Գործ. ժողովոյ ընտրութեամբը:

Սոյն ազգօգուտ ձեռնարկին յառաջդիմութեան ցանկացողները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ վաղուան նիստին:

Ի դիմաց հիմնադրի անդամոց

Յ. Ա. Աղամեան Յ. Կ. Ճանկիւլեան




ՀԵՐՔՈՒՄ

«Քանի մը շաբաթ առաջ «Լոյս»-ի մէջ հրատարակուած Վառնայի հարսնիքին երգը՝ ծրագրի մը չյաջողելուն պատճառաւ զգացուած կատաղութեան արգիւնք մը ըլլալը ստուգեցինք,

Լոյս թիւ 39:

Խմբ. Լոյսի:

Հայելի. — Պոլսոյ մեր յարգելի պաշտօնակիցները պէտք է գիտնան թէ այս տեղէն իրենց ղրկուած այդ տեսակ գրութիւնները ստուծիւն և անձնական թշնամութեանց արգիւնքներ են, և որոնք խնդրոյն ծանօթ տեղական ժամուկին կողմէ մերժուած ըլլալուն պատճառաւ միայն իրենց կը ղրկուին:



Գ. Պոլսէն կը գրեն մեզ.

«Տեղս երկու քահանայ գտնուելով հանդերձ երբեմն ժամերգութիւն չի կատարուիր... յարգելի: պատճառներով: Այսօր մարտ 20, երկուշաբթի, առաւօտեան ժամերգութիւնը տեղի չունեցաւ, որովհետեւ տէր Մեծափորը հիւանդանոց դացեր էր, իսկ տէր Գօնեաք, որ կոնծախտէ կը տառապէր երկու ամիսէ ի վեր, թէև սօքթուը արգիլած էր կոնծելը, բայց սօքթոռ Բաքոսին թոյլտուութեամբ արտուուն առտուանցով դիմած էր ղինեպան Գօսթային... դեզ գնելու համար»:

ՍՈՒՐԲԱԿ

Փ Ո Ւ Ն Ջ

Աշխարհիս մէջ միմիայն մօր սէրը պատրօնք չունի:

— Երեք շաբեր ու երեք քիչեր մարդս կը վատթարացնեն: Շատ խօսիլ ու քիչ գիտնալ: Շատ վատնել ու քիչ ունենալ: Իր անձին վրայ շատ համարում ունենալ ու քիչ արժեք:

— Ամէն բարի ըսուած մարդու բարի մի ըսեր, կարելի է շարիք ընելու միջոցէն զօրկէ:

— Լեզուն ցաւած ակումբին կը մօտենայ:

— Աւելի լաւ է գատարկ քսակ ունենալ, քան թէ գատարկ գլուխ:

— Սրտի տկարութեան զգացում չի կրնար ըսուիլ:

— Իր բերանը և լեզուն զսպողը՝ իր հոգին նեղութիւններէ կ'ապատէ :

— Պատուոյ արատը խոշանակով, աճառով ու զրամով չի մաքրուիր :

Ո՞րն է կնոջ մը կամ օրիորդի մը համար ամենավայելուչ զգեստը .

— Ան որ ինք՝ կինը կամ օրիորդը կը կարէ իր ձեռքով, իրեն համար :

Ո՞րն է տղոց համար ամենագեղեցիկ ու յարմար զգեստը .

— Ան՝ զոր մայրը կը կարէ իր գուկներուն համար :

ՀԱՆԱՔԵՑ ԶՈՒԹԱԿ

ՅԵՐԱՅԻՄ

(Աժանս Բոթոժիկ և Ընկ.)

Բարիդ

Խելացի դաւիթ մը առաջարկեց Անգլիոյ կառավարութեան դէմ դատ բանալ, ամբաստանելով զայն իբր պատճառ հայ ազգին քաջածայսչափ փորձութեանց ու փնտուց ու անկէ պահանջել 140,000,000 Օսմանեան չիլ չիլ թըւթընը վրան ոսկիներ : Այս առաջարկը երկիցս ծափահարուեցաւ . . . յիմարապահներու կողմէ :

Բաղմամարդ մայրաքաղաքի մը մէջ կազմուած խաչագողներու մեծ ժողովը որոշեց պառնալ Բուրադի Բախի տեսակէն խաչագողին մէկը մեռած յայտարարել, որպէս զի նոր անունով ու տարազով հրապարակ գայու մինչև ցարդ չի գացած հեռաւոր երկիր մը երթալով, տեղւոյն ազգայիններն ալ . . . սոթտէ :

Մարտէյլ

Երկու բարիժաղիկներ նոր աշխարհ երթալու համար տեղէս մեկնեցան. հոն հասնելուն պէս, անշուք քաղաքներու մէջ բնակող ու թերթ ու լրագրի երես չի տեսնող անգիտակից ազգայիններէն տղարներ պիտի շորթեն, «զէնք պիտի առնենք» ըսելով :

Պ. Քաղաք

Իրազեկ ակմբոց մէջ զրոյց կը պտտի թէ, խաչագողութեամբ ամբաստանեալ Ա. պարոնը որ ինքզինքը ընկերական ատեանի կենթարկէր ի ձայն փողոյ և սըրընգի, հիմա այն ատեանին կէտէ եղբւր, իրեն պէս ամբաստանեալ մէկ քանիներու հետ ուշուշմիշաբանալան ախտէն բռնուած ըլլալուն համար :

Լահէյ

Առնավուտո—հայկական գօմիտէն որոշեց Զատիկի առթիւ շրջաբերութեան հանել մեծաքանակ . . . թուղթէ հէլվա և չալապուրի շէրպէթի, որոնք պիտի վաճառուին զատկական երեք օրուան զբօսանքի տօնավաճառներուն մէջ, ի նպաստ առնավուտուխի և հայրենիքի ազատութեան :



ՓԱՓԿԱՃԱՇԱԿՆԵՐՈՒՆ

2 Ե Օ Ր Է Կ

Զատիկական ընտիր չէօրէկ խնամօք պատրաստուած է Տ. Տիգրան Թիւֆէնկճեանի կողմէ և կը ծախուի Սանդրալի գարեջրատունը : Գին դիւրամատչելի :

«Վէրեւոյ» հայ թատերախումբը այս գիշեր պիտի ներկայացնէ Լէյլա իլէ Մէճնուն, վաղը իրիկուն ալ Աֆրիքանտ տրամ գօմէտին :

ՅԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՎԱԿԵՐԱԳԻՐ ՄԸ

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

«Հետեւեալը՝ ասկէ 64 տարի առաջ, 1836ին, Տրապիզոնի Հայոց առաջնորդ Տ. Յովհաննէս վարդապետ պատրաստած է, շրջաբերականի ձեւին տակ իր վիճակայնոց ու զգեւորով:

Ինչպէս պիտի տեսնեն ընթերցողները, Տ. Յովհաննէս վարդապետ ինքը կանոններ կը սահմանէ ամուսնացողներու մասին, ծանրանալով նոյն իսկ անշան պարագաներուն վրայ, որոշելով նուիրատուութեանց քանակը, հագուստներուն ձեւը, մսխուելիք դրամը, ևն:

Այս վաւերագիրը որ բաւական լոյս կը ունենայ Տրապիզոնի Հայոց ան առեւտրական բարքերուն ու սովորութիւններուն վրայ, իր կարեւորութիւնը կրնայ ունենալ բանասէրներու համար:

ՊԱՏՃԷՆ

Յիսուսի Քրիստոսի ծառայ Յովհաննէս վարդապետ Հայոց Լուսաւորչական Եկեղեցւոյն Քրիստոսի և շնորհիւ նորին՝ վերատեսուչ հայ ժողովրդեան բարեշէն քաղաքիս Տրապիզանու եւ այլոց, յորմէ գիտութիւն լիցի իրենց Ս. Եկեղեցեաց Տրապիզանու, և Եկեղեցեացն Կիւմիւշխանայու, Թրիպոլու և Քերասոնի, Եկեղեցական ժառանգաւորաց և համայն օրհնեալ ժողովրդոց տրանց և կանանց, զի Աստուածային Ս. Առաքեալն Պողոս յորդորէ, ունկնդիր լիւրութեամբ առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա, զինոքա տրքնին վասն ոգւոց ձերոց: Նախ քան զմեզ եւ իւրեքի անձինք եղեն առաջնորդ ձեզ և ի ժամանակի իւրեանց զպարտաւարաւ հարկաւոր կանոնս եղեալ ի վերայ ձեր, ոմանք ի նոցանէ փոխեցան յայլ վիճակ, և ոմանց կատարեալ զընթացս կենաց իւրեանց հանգեան ի Տէր, յետ նոցա այժմ ի մեզ յանձնեցաւ զառաջնորդական պաշտօն, և հարկ ի վերայ մեր կայ զօգուտսն ձեր խորհիլ և վնասակար սովորութիւնս ձեր բառնալ ի միջոյ ձերմէ,

վասն ի յօգուտ և ի նշան հոգւոց և մարմնոց ձերոց. Աստուածային խնամօք և հայրական սիրով և գթութեամբ ահա հաստատեմք զկարեւոր կանոնս այսոքիկ:

Ա. — Յորժամ որ զգուստր իւր նշանեացէ աղայի ուրուք, աղջիկն լիցի յերկոտասան ամաց կամ աւելի, և ոչ պակաս:

Բ. — Նշանեալ աղջիկն կամ տղայն մի՛ երբէք երթիցեն ի տունս միմեանց:

Գ. — Զկնի նշանելոյ ո և իցէ նշանն ոչ ևս դարձցի յետս:

Դ. — Խնամոյ զիշխմէք կամ գոչում մի՛ լիցի:

Ե. — Ընծայ տալ հարսնածու աղջկան կամ փեսածու տղայոց մի՛ լիցի:

Զ. — Երեք կարգ լիցի զգետ աղջկան, առաջին, երկրորդ, երրորդ: Առաջին կարողութիւն արասցէ երեք կերպ հանդերձ, այսինքն խուժնի, ալաճա, չիթ և ութ շապիկ: Երկրորդ կարողութիւն արասցէ երկու կերպ, խուժնի, չիթ և վեց շապիկ: Երրորդ կարողութիւն արասցէ կէշի (մետաքսէ գործուածք) և չիթ և չորս շապիկ, սեւայի կամ այլ տեսակ ինչ եւ իցէ կիւպտանաւ, հանդերձ երեցունց եւս մի՛ լիցի:

Է. — Նշնպէս կիւպտանաւ փէշկիր, չէվրէ, մահրամա և պիւրիւնձիւկ շապիկ մի՛ լիցի, այլ մանած:

Ը. — Չամաշուր մի ումեք տացի, միայն փեսայի, և այն ըստ կանոնիս:

Թ. — Ի հարսանիս միայն մերձաւորք ազգականս կռչեսցին:

Ժ. — Կերակուրք հարսանեաց, առաջին կարողութիւն արասցէ վեց կերպ, երկրորդ կարողութիւն չորս, և երրորդն երեք, ոչ աւելի:

ԺԱ. — Հարսանիքն որ քահանայի և իցէ ծուխ, նոյն քահանայի յեկեղեցւոյ պսակ լինիցի:

ԺԲ. — Նշանածեալ հարսնածու աղջիկն վասն հինայի մի՛ երթիցէ տանէ ի տուն:

ԺԳ. — Հարսնացու աղջիկն բաղմութեամբ ի բաղանիս մի՛ երթիցէ:

ԺԴ. — Նշնպէս փեսայն կնքահարով միայն երթիցէ ի բաղանիս պարկեշտութեամբ:

ԺԵ. — Ի հարսանիս միայն ի կերակէ երեկոյին երթիցեն և այնք աղբականք և ոչ բարեկամք, եւ զկնի պսակին իւրաքանչիւր ի տունս իւրեանց երթիցեն:

ԺԶ. — Հարսնեկրայր ամենևին մի լիցի:

ԺԷ. — Ի տուն հարսանեաց սենեկի այսինքն օտային մէջն կանացի զգեստ կամ ասղարուր փէշկիր եւ չէփէ կամ այլ ինչ մի եկեացն ի վերայ շաւանայ, նոյնպէս եւ մի յայլ առուրս ի քառակի կամ ի Ծննդեան:

ԺԸ. — Ի մկրտութեան աւուրն տղայոց ընդունելութիւն՝ աչն է զիաֆէթ մի լիցի եւ կամ աչաց լուսոյ մի երթայցեն:

ԺԹ. — Ի պանդխտութենէ եկողաց զիաֆէթ մի լիցի ի սպառ:

Ահաւասիկ զոյս իննեւտասներորդ կանոնս լուսի ի մէնջ, որպէս մեր պարտաւորիմք զօգուտն ձեր կանոնաւ հաստատել, եւ զուր որհնալքդ պարտական էք հնազանդիլ կանոնաց մերոց, եւ որ ոք հակառակ կայցէ այս հրամանին եւ մանաւանդ հակառակորդք սոյն կանոնացս, զիտուցեն եւ ծախցեն՝ առանց պատժոյ ոչ մնան ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ: Այլ Աստուած խաղաղութեան եւ սիրոյ պահեսցէ զձեզ ի սէր եւ ի խաղապութիւն եւ զհնազանդութիւնն օրհնեսցէ, եւ ամենայն բանից եւ գործոց ձերոց բարեյաջողութիւն տացէ: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեւեանդ եւ օրհնեսցէ զձեզ: Ամէն:

Գրեցաւ յամի Տեառն 1836, յԱպրիլի 18, ի Տրապզանու:

ՅՈՒՀԱՆՆԷՍ ԱՄՐԴԱՊԵՏ

Արեւել

Զարին պարգևոյ Բարիւ քաղաքին

Ռուսիոյ կայսրը սքանչելի նուէր մը ըրած է Բարիւ քաղաքին. այդ պարգևը կը ներկայացնէ Ֆրանսայի աշխարհացոյց տախտակ մը որ յօրինուած է բարձր քոնդակով, որուն գործածուած են գեղեցիկ եւ աշխիւ քարեր:

Գործը անգին հրաշակերտ մըն է, զոր Բարիւ տարած է Ապրիլ 2ին (Ն. Տ.) զօրավար Մօսթավէնքօ, եւ որ ի ցոյց պիտի դրուի ծուցահանդէսին մէջ:

Զանազան գոյներով քարեր Ֆրանսայի

գաւառները կ'որոշեն: Քաղաքները աշխիւ քարերով ներկայացուած են. Մարսիլեան՝ հնիւստեամբ, Բարիլը՝ սիպոնիքով, Նիսը՝ սիպոնիքով, Պօրտօն՝ ազաւանիւսով, Շէրպուրը՝ ալեքսանտրիքով, եւ Լիլը՝ Շէնաքիքով: Գետերը՝ թափելով, քաղաքներու անունները սակիով, Ովկիանոսները՝ յարի յազիւղով, իսկ շրջանակը՝ որ 1, 60 միլիէ, յարի նիգօյա II (Նիկոլայեան քարով):

Այլապէս զործածուած անգին քարերը ի նկատի առնելով կարելի է ըսել թէ այդ քարտէսը ճշմարտագէտ կայսերական նուէր մըն է: Ս. Դ.

Ծ Ի Ծ Ա Ղ

Հայր եւ Որդի

Հայրիկ, առջի օրը կըսէիր թէ կարմրնալը ամօթխածութեան նշան է.

— Այո՛, զաւակս, երբ մէկը իր ըրածին վրայ կը խաչի ու երեսը կը կարմրի, ըսել կըլլայ թէ պարկեշտ է:

— Ըսել է որիմ մայրիկս շատ պարկեշտ կ'ընի մըն է.

— Այո՛ . . . բայց ինչէ՞ն հասկցար:

— Որովհետեւ ամէն առտու իր երեսը կը կարմրցնէ:

Բժիշկը ու Ծերուկը

Բժիշկ մը ձեր պարոնի մը կըսէ. — Պարոն, ձեր լեզուն շատ բորբոքած կը տեսնեմ, անշուշտ բերներնուդ համը կորսնցուցած էք:

— Այո՛, պարոն բժիշկ, երէկ իրիկուն պարահանդէսի մը մէջ կորսնցուցի զայն:

Կանանց քաղնիքի մէջ

Սա օրիորդը ո՞վ է, տիկին.

— Ձե՞ս ճանչնար, մեր գրացուհիին աղջիկը, Շուշանիկն է:

— Շուշանիկն է մի՛. . . սխալ, տի-
կին, անիկա ճերմակ է, իսկ ասիկա սե-
ւի մօտ բան մըն է .

— Անհոգ եղիք, բաղնիքէն ելլե-
լուն պէս, դարձեալ կը ճերմկնայ .

Այր եւ կին

Ղաղարիկ աղա, ի՞նչ նուէր պիտի
տաս ինձի այս տարի, անուանդ տօնա-
խմբութեանը առթիւ .

— Ոչինչ. . . սիրելիս, ոչինչ .

— Իր կինը չափազանց սիրող ա-
մուսինը զոնէ տարին անգամ մը անոր
նուէր մը կուտայ .

— Ես ալ չքեղ չափազանց սիրե-
լուս համար չեմ ուզեր ատանկ բան մը
ընել .

— Սիրելուդ համար մի՛. . .

— Անշուշտ. . . որովհետեւ չեմ ու-
զեր ատանկով յիշեցնել քեզի թէ, տա-
րի մը աւելի ծերացած ես .

Անմեղ սխալմունք մը

Հիւանդի մը սպասուհին վազելով
տօգթէօր բերելու կերթայ. soqթէօրը
կուգայ և փոխանակ հիւանդութիւնը
քննելու, քէրքէթինը հանելով կ'ուզէ
ակռան քաշել. հիւանդին տէրը կը
հասկնայ որ սխալմունք մը եղած է, նե-
րողութիւն կը խնդրէ: Սպասուհին փո-
խանակ բժիշկի՝ ատամնաբոյժը բերած
էր, կարծելով թէ «սիջճիին ալ տօք-
թօռ կըսեն» .

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔ

(Շրջուն հարկիրը)

Հաւկիթի մը պարունակութիւնը կը
պարպէք՝ գլխի կողմէն դնդասեղի մը
միջոցաւ բացուած ծակէն, յետոյ այն
ծակէն ներս կը դնէք միջատ մը և կամ
քիչ մը սնդիկ, ծակը ճերմակ մեղրա-

մամով գոցելէ ետքը եթէ սեղանի մը
վրայ դնէք, զարմանօք պիտի տեսնէք
որ հաւկիթը հօս հոն կը պտտի .

ՀԱՐՑԱՐԱՆ

Աշխարհի մէջ ամենէն յարգի քարը
որն է .

Որո՞նք են որ շարունակ իրենց հացը
ուրախութեամբ կը հայթայթեն .

Առաջին դիտողին նուէրն է երկու
կատակերգութիւն .

Ծանօթ — Նամակները գոյ, հասցէները
որոշ ու պահարանին վրայ պէտք է աւելցնել
«Զեփիւսին» յանձնելի .

ՆԱԽԱԿԱՏՈՒՓ

Պուրկաղէն խմբագրութեանս հաս-
ցէին 5 սանդիմնոց փուլով նամակ մը
զրկուած էր, զոր ըստմեր սովորութեան
մերժեցինք, 20 սանդիմ քախաւ չի տա-
լու համար .

ՆԿԱՐ ՀԱՆՈՒԿ

Թիւ 155 «Հայելի»ի նկարհանուկը կար-
գալ այսպէս .

«Ուսանող պղտիկը զուարթ ու կայ-
տառ է շարաթ երեկոյ» .

Քսանը չորս նամակագիրներէ երեքը
անխալ կարգացեր էին, որք են . Բերկ-
րուհի Մինէճեան Վառնայէն, Փուլիկ
Քէտտանեան Ռուսնուզէն և Հայկ Տ. Յո-
վակիմեան Տոպրիչէն: Իսկ քսան նամա-
կագիրք կարգացեր էին «ուսանողը»,
մինչդեռ այն և տառը որ միւս տա-
ռերէն շատ պղտիկ է, պէտք էր «պղզ-
տիկ ը» կարգալ. և արդէն պղտիկ
ուսանողը չէ՝ մի որ «վաղը կիրակի է»
ըսելով զուարթ ու կայտառ կըլլայ .

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՍԱՄՍՈՆԻ ԳԱՏԸ-ԳԻՒՂԸ

Նկարագրելէ առաջ Գատը-գիւղցի կանանց տարազը, կ'արժէ այս առթիւ համառօտ տեղեկութիւն մը տալ նախ՝ գիւղին վրայ :

Գատը-գիւղ, Սամսոնի մէկ թաղը կը նկատուի, քանի որ գրեթէ միացած են իրարու. թէպէտ, իրենց բարբերովն ու տարազովը կը տարբերին մէկ մէկէ :

3—320 տունով այս գիւղը, որ քաղթէն հաղիւ 10 վայրկեանի հեռավորութիւն ունի, ուրիշ գիւղերու նման քանի մը գերաններով իրարու ընդհանուր, հողէ, շիւղէ տանիքներով շինական հիւղակներէ չի բաղկանար. գրեթէ առանց բացառութեան, բոլոր տուներն ալ քաղթի տուններու դրութեամբ կառուցուած են, թէեւ ամենամեծ մասամբ հին գրութեամբ շինուած, խեղճ ու կրակ բաներ : Գիրքը շատ գեղեցիկ է եւ ծովահայեաց : Չիթենիներով շրջապատուած զառիթափի մը վրայ կառուցուած այն գիւղը Սամսոնի գլխուն զարդը պիտի կոչէի, եթէ հակառակ Սամսոնի լայն եւ ուղիղ փողոցներուն ու գեղափառոյց տուններուն, իր ծուռ ու մուռ ելեւէջոտ ու նեղ փողոցներովը եւ անփայլ տուններովը Մարգուանը չի շինէր :

Բնակիչները ամբողջ ալ հսկայաբարձ գեւորացի են, որոնք կը զբաղին ծխախոտի մշակութեամբ, երիտասարդները Ռէփին եւ ծխախոտի վաճառականներու քով կ'աշխատին : Մաս մըն ալ կոշիկար, մանրէւքարտաձի, հացագործ, եւայլն :

Գատը-գիւղցիք, իրենց անցեալով կը պարծենան, իբեւ ուտող խմող մարդիկ. թէպէտ հիմա, առջի պէս գիւրութեամբ չեն շահիր, բայց շահածնին ալ դժուարութեամբ չեն վատնիր. մէկ խօսքով, քսակնուն մէջ հինգսը գրամ պահելէ չեն ախորժիր : Նոյն, կեր ու խումնին, պար ու երգերնին անպակաս է :

Գատը-գիւղի մէջ շուկայ չկայ, ու խանութներն ալ կամ սրճարան, կամ գինետուն եւ կամ փուռեր են : Եւ արգէն, ուտելու համար՝ հաց, խմելու համար ողի, գինի, խաղալու համար՝ սրճարան ըլլալէն վերջը,

ալ, ուրիշ ինչ բանի պէտք ունի Գատը-գիւղին : Ասոր համար է որ, աչքի ցաւը անպակաս է հոն :

Սամսոն, տարուէ տարի վերնագաւառներէն գաղթողներով կը մեծնայ, կ'նգարձախի : Վերերէն նոր եկող գաւառացի կրնը, է՛ն առաջ, «Սամսոնի անհրաժեշտ անկէ եղեր» ըսելով, կը տեսնես որ շատ քիչ ժամանակի մէջ վրան դուխը Սամսոնի քերթեցւոր — եւրոպական տարազ — շտկած, սակայն Գատը-գիւղցի կինը կատարեալ անտարբերութեամբ յամա կը մնայ ու չի բաժնուիր իր անհրաժեշտ հանգերձներէն : Ասոր համար է որ, հակառակ Սամսոնի մէջ վատագոյն — մանաւանդ յոյն-մօտիստներուն, որոնք գրեթէ ամէն թաղի մէջ կը գտնուին, եւրոպական տարազ մը անգամ չերեւար հոս :

Եւ ահա թէ ինչ է Գատը-գիւղի կնոջ տարազը. նախ՝ մետաքսէ շղարչի նման բարակ եւ նուրբ շապիքն է որ կը հագնին : Այս շապիկը այնպէս մը շինուած է, որ կուրծքը մերկ կը թողու. երկմարդոց բաճկոնակներուն նըման բացուածքով մը : Յետոյ՝ անգրավար, տիքին վրայէն կը հագնին ուրիշ մըն ալ, աւելի՛ լայն եւ ուռեցիկ որ բաց կանանչ կամ բաց կարմիր ճանձեղէն շինուած կ'ըլլայ ընդհանրապէս : Վերջը կը հագնին միագոյն կամ գունաւոր պարսկաձոր հնքաւորի, մետաքսեղէն թանկագին նիւթերէ կամ եւրոպական անփափկ շինուած եւ վրան մանր կամ խոշոր ծաղիկներով կէտկիտուած : Պարսկօտին կուրծքին կողմը, ճիշդ սեղմիրանի մը հմայող կորութեամբ շինուած է, որ կնոջ լանջքին կազմուածքին համեմատ, դուրս ցցուած կ'երևայ : Պարսկօտն ալ չի ծածկեր կուրծքը, այնպէս որ բարակ շապիկով քօղարկուած ըստիքները կ'իտմին, մերկ կուրծքին դուրսը կը մնան : Իսկ մէջքէն մինչեւ ոտքերը, պարսկօտը ալ ու ձախ կողմէրէն երկուքի բաժնուած ըլլալով, երկու կողմէն ալ ցոյց կուտան ճանձեղէն ուռեցիկ վարտիքը :

Հիմա, մէկ մեքքօ տարածութեամբ քառակուսի պարսկական ասուինէ անձեմ շալք զոր եռանկունաձեւ վերածելով, մէկ ծալքը վարջար ետեւէն ձգելով, միւս երկու ծալքերը կը բերէ կը կապէ իրարու, փորին

վրայ . ետեւը ձգած ծայրէն կախուած է միշտ
սրնային ծոպ մը :

Յետոյ , մաս առ մաս , երկու , երեք եւ
բնմն չորս գոյներով գործուած մետաքսէ
բարակ առիգածը (շիւշջարնալ) ձեռք առնե-
լով , այս անգամ , հակադարձօրէն կը կապ-
ուի . այսինքն առջեւէն դէպի ետեւը : Ու վեր-
ջապէս կը հագնի , էն շատ աչքի զարնող ,
առջեւները սաւնաւոր մուշտակով եզերուած
սեւ կամ կեռասագոյն թաւիչէ քղամիթը
(միմդան) վրան ու եզերքները սրնային բան-
ուած շատ նուրբ զարդերով : Քղամիթը շատ
կարճ կ'ըլլայ :

Ահա , Գատը-Գիւղացի կնոջ մը հանգեր-
ձեղէնները , բայց անոնցմէ դատ կան նաեւ
ոսկեղէն զարդերը զորս պիտի նկարագրեմ :

Գատը—գիւղացի կնոջ մը համար աղա-
մանակէն զարդերը կարեւորութիւն չունին
բնաւ : աղամանդէ ո՛չ պօռը , ո՛չ մատանին ,
ո՛չ օղը , ո՛չ ապարանջանը , ո՛չ այսինչը , այն ինչը ,
այլ կերպէն ան ունենալ նախ՝ գազաթնոց մը
Տեղիւնիք : Գազաթնոցը բոլորովին տասնոց
եւ բսանոց ղաղի ոսկիներէ շինուած բոլո-
րակաձեւ զարդեղէն մը ըլլալով , երկու կողմէն
կապեր ունի , նմանապէս ղաղի ոսկիներով
զարդարուած : Գազաթնոցը , ճակտէն բիւ մը
վերով , մազերուն վրայ դրուելով , կամրա-
ցնէ զայն :

(Մնացեալը յաջորդով)




ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԻՆԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԸՆ ՄԵՆԵԱԿԸՆ

«Գ.ՅԱՆ ԱՎՏԱՆ» ռուսերգութեան հան-
գուցեալ հեղինակին սոյն Բ. երկն ալ կը
յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը :
Գինն է 1 ֆրանք : Գիմը առ Արամ Մանու-
կան , բոսթրէսթանի , Վարնա :



Վառնա, Բոնալտիւրա փողոց թիւ 112
ԲԵՐԻՅԵԼԻ ԿԻՕՐԵԿԵԼԻ
ՊՈԼԿԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՄԱՆԻ

Կը շինէ , ու կը պատրաստէ ոսկիէ և
արծաթէ ամեն տեսակ գործեր , լաս-
տիկէ (ֆառլոֆ) և մեաաղէ կնիքներ
քլիշէներ և կաշվանօ կընէ : Գիները յոյժ
չափաւոր :



ՆՈՐ

Ա. ՉՄԱՏՈՒՆ

Կ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆԻ

Սագալը շէշմէ , աղջկանց կիմ-
նապիէի դէմը , Վարնա :

Ոսկեղած , կաշեկաղմ , լաթակաղմ և
թղթակաղմ եւրոպական ճաշակաւ :

Ֆիւրամատչելի գիներ : Կը պատրաստէ
Նաեւ վաճառականական տոմարներ և
դպրոցական տետրակներ :

Отговорникъ М. Сконовъ
Печатница „Взаимность“ — Варна